



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«ԱՐԱՊԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ»

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«27» 06 2017թ



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 59

Ձեռնարկողը՝

«ԱՐԱՔԱՐ ՏՈՒՖ» ՍՊԸ

«Շիրակի մարզ, ք. Արթիկ, Չարենցի 13»

Գործունեությունը՝

**Արթիկի փուֆի հանքավայրի արևելյան տեղամասի
արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվեփոխություն**

«Շիրակի մարզ»

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝

Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 59

«27» 06 2017թ.

ՀՀ Շիրակի մարզի Արթիկի տուֆի հանքավայրի արևելյան տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Պատվիրատու՝ <<ԲՆԱՔԱՐ ՏՈՒՖ>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝ «Ա»
Տեղադրման վայրը՝ ՀՀ Շիրակի մարզ

Արթիկի տուֆի հանքավայրը տեղադրված է Արագած լեռան զանգվածի հյուսիս - արևմտյան լանջին: Հանքավայրի բացարձակ միջերը տատանվում են 1550-ից մինչև 2100մ սահմաններում:

Կլիման մեղմ է, ձմեռը ցուրտ է մինչև - 25⁰ – 30⁰ C, իսկ ամռանը հով՝ + 15⁰-ից մինչև +20⁰ C: Տարեկան տեղումների միջին քանակը կազմում է 500 – 600մմ:

Հանքավայրի արևելյան տեղամասի հաշվեկշռային պաշարները հաստատվել են նախկին ԽՍՀՄ ՊՊՀ-ի 20.02.1974թ. N7111 արձանագրությամբ: Միևնույն ժամանակ որոշված է.

ա. I-ին և II-րդ բլոկների ելքը արթիկյան տիպի տուֆերից - 33.5%, II-րդ կարգի բլոկների ելքը դացիտանման տուֆերից - 38%:

բ. Արթիկյան տիպի տուֆերից երեսապատման իրերի բլոկների արդյունահանման ժամանակ ուղեկից ստացվող պատշարի քարի ելքը - 3.5%, խամքարի ելքը -19.5%: Դացիտանման տուֆերից բլոկների և պատշարի քարի ելքը - 40.3%, խամքարի ելքը - 41%:

Ըստ որակական հատկանիշների արթիկյան և դացիտանման տուֆերը լիովին բավարարում են գործող ստանդարտներին 9479-69 ԳՈՍՍ-ի «Բլոկներ երեսապատման իրերի ստացման համար», 9480-69 ԳՈՍՍ-ի «Բնական քարերից սղոցված երեսապատման սալիկներ», 4001-66 ԳՈՍՍ-ի «Պատշարի քարեր կրաքարերից և տուֆերից», 100-62 ՀՍՍ-ի «Շինարարական քարեր տուֆերից և բազալտներից», 8267-64 ԳՈՍՍ-ի «Խիճ բնական քարից շինարարական աշխատանքների համար» և 9751-61 ԳՈՍՍ-ի «Թեթև բետոնների ծակոտկեն անօրգանական լցանյութեր» ներկայացվող պահանջներին:

Սույն նախագծով նախատեսված է հանքային դաշտերը շահագործել 2 բացահանքերով, օգտակար հաստաշերտերի ամբողջ հզորությամբ, մինչև դացիտանման տուֆերի հատակը:

Տեղամասերից մակաբացման ապարները հեռացված են, սակայն օգտակար հաստաշերտի վրա կամայականորեն փռված են տարբեր չափերի և ծավալների թափոնակաույտեր:

N1 բացահանքի օտարման տարածքը կազմում է 9.4հա, նրա սահմանների մեջ ներառված տուֆերի հաշվեկշռային պաշարների քանակը 862660մ³ (այդ թվում՝ արթիկային տիպի տուֆեր - 563316մ³, դացիտանման տուֆեր-299344մ³):

Անուշյան ՄԵՅ օգնություն



N2 բացահանքի օտարման տարածքը կազմում է 2.5հա, նրա սահմանների մեջ ներառված տուֆերի հաշվեկշռային պաշարների քանակը 223580մ³ (այդ թվում՝ արթիկային տիպի տուֆեր - 195950մ³, դացիտանման տուֆեր-27630մ³):

Բացահանքերի ծառայման ժամկետը ընդունված է մինչև 50 տարի:

Բացահանքերի տարեկան ընդհանուր արտադրողականությունը ըստ տուֆերի զանգվածի ընդունված է 21,0 հազ.մ³ (այդ թվում՝ բացահանք N1-16700մ³, բացահանք N2-4300մ³): Ուղիղ կտրված հատ քարի ելքը ընդունված է 40,3%, խամքարի ելքը 30%:

Ընդունված մշակման համակարգի տարրերն են

- աստիճանի բարձրությունը - 0.42մ;
- աշխատանքային հրապարակի լայնությունը - 14.19մ;
- քարհատ մեքենայի աշխատանքային ճակատի միջին երկարությունը - 100մ:

Լեռնային աշխատանքների կարգաբերման և օգտակար հաստաշերտերի մեծ կորուստներից խուսափելու համար նախատեսվում է շահագործման աշխատանքները սկսել հաջորդաբար վերևի հորիզոններից դեպի ներքին հորիզոնները (բացահանք N1 1922մ միջ ունեցող հորիզոնից, բացահանք N2 1921.88մ միջ ունեցող հորիզոնից): Բացահանքերի շահագործումը նախատեսվում է կատարել համատեղ կերպով:

Նախագծված բացահանքերը վերջնական դիրքում ունեն հետևյալ պարամետրերը՝

Հ/հ	Պարամետրերի անվանումը	Չափման միավորը	Բացահանք N1	Բացահանք N2	Ընդամենը
1.	Առավելագույն երկարությունը	մ	500	210	
2.	Առավելագույն լայնությունը	մ	195	153	
3.	Լրամշակման խորությունը	մ	9.68	9.62	
4.	Ջբաղեցրած տարածքը	հա	9.4	2.5	11.9
	Հաշվեկշռային պաշարների քանակը	մ ³	862660	223580	1086240
5.	այդ թվում՝				
	- արթիկյան տիպի տուֆեր	-	563316	195950	759266
	- դացիտանման տուֆեր	-	299344	27630	326974
	Արդյունաբերական պաշարների քանակը	մ ³	826430	212845	1039275
6.	այդ թվում՝				
	- արթիկյան տիպի տուֆեր	-	540070	186540	726570
	- դացիտանման տուֆեր	-	286400	26305	312705
7.	Կուտակված լցակույտեր	մ ³	36100	7200	43200


Բացահանքերի մնացորդային պաշարների շահագործման ժամանակ օգտակար հաստաշերտի նախագծային կորուստները պայմանավորված են օգտակար հաստաշերտի տեղադրման պայմաններով և շահագործման տեխնոլոգիայով: Դրանք ընդհանուր հանքային կորուստներ են, որոնք բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում և հատակում: Այդ կորուստները կազմում են N1 բացահանքի համար 36230մ³ կամ 4.2%, N2 բացահանքի համար 10735մ³ կամ 4.8%: Միջին կորուստները հանքային դաշտի համար կազմում է 46965մ³ կամ 4.32%:

N1 բացահանքի բարձրադիր մասի 1921.2-1882.98մ միջ ունեցող հանքաստիճանները բացված են: Խորքային մասի 1821.3-1875մ միջ ունեցող հանքաստիճանների բացումը կատարվելու է թեք խրամների միջոցով:

N2 բացահանքի բարձրադիր մասի 1920.2-1907.6մ միջ ունեցող հանքաստիճանները բացված են: Խորքային մասի 1905.5-1825մ միջ ունեցող հանքաստիճանների բացումը կատարվելու է թեք խրամների միջոցով:

Բացող թեք խրամների լայնությունը հիմքի մասում ընդունված է 7,0 մ, իսկ թեքությունը - 10%:

Կտրող (պիոներական) խրամների չափերը ընդունված են 2x2մ:



Հանքաստիճանների բացող և կտրող խրամների անցումը կատարվում է CMP-026 մակնիշի քարհատ մեքենայի միջոցով:

Բացահանքային դաշտերից մակաբացման ապարները հեռացված են, բարձրադիր մասերի հանքաստիճանները բացված են, որի պատճառով լեռնակապիտալ աշխատանքներ չեն նախատեսվում:

Հանույթային աշխատանքները նախատեսվում է կատարել ընդլայնական միակող, ցածրաստիճանային ընդգրկումով մշակման համակարգով: Լեռնային աշխատանքների ուղղությունը հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք՝ CMP-026 մակնիշի քարհատ մեքենայով:

Կտրտված բլոկների տեղափոխումը հանքախորշից մինչև 5-10մ հեռավորության վրա և կուտակումը դարսակույտերի մեջ նախատեսվում է կատարել CAT-924 բազմաֆունկցիոնալ անիվային բարձիչի միջոցով:

Բլոկների բարձումը դարսակույտից սպառողների տրանսպորտային միջոցների մեջ կատարվում է 6.3տ բեռնատարողությամբ KC-2561K ավտոկռունկի միջոցով:

Բացահանքում պատշարի քարերի և թափոնների բարձումը սպառողի տրանսպորտային միջոցների մեջ կատարվում է ձեռքով:

Բացահանքերի շահագործման ժամանակ առաջացած թափոնները (N1 բացահանքում 22.38մ³/հերթ, N2 բացահանքում 6.67մ³/հերթ) աշխատանքային հանքաստիճաններում T-170 բուլդոզերով տեղափոխվում է 5-10մ հեռավորության վրա և կուտակվում:

Այնուհետև, կուտակված թափոնները 1.5մ³ շերտի տարողությամբ CAT-924 անվային բարձիչով բարձվում է 6,0 մ³ թափքի տարողությամբ KaMA3 – 5511 ավտոինքնաթափի մեջ և տեղափոխվում մինչև 0.4կմ միջին հեռավորության վրա գտնվող գործող արտաքին լցակույտ:

Ընդունվում է 1 հատ CAT-924 անվային բարձիչ 1 հատ KaMA3-5511 ավտոինքնաթափ, որոնք լրիվ բավարարում են բացահանքերում կատարվող բոլոր տեսակի աշխատանքների կատարմանը:

Բուլդոզերային աշխատանքները բացահանքերի պայմաններում կայանում է բացահանքերի տարածքներում նախկին լցակույտերի տեղափոխումը և կուտակումը, թափոնների տեղափոխումը և կուտակումը, ինչպես նաև լցակույտերում ապարների տեղափոխումը և մակերևույթների հարթեցումը: Դրանց տարեկան ընդհանուր ծավալները համապատասխանաբար կազմում է 2130մ³; 7554.19մ³ և 9714.19մ³:

Բացահանքի շահագործման ժամանակ լցակույտ առաջացնող ապարների ընդհանուր ծավալները կազմում են.

1. Բացահանք N1 - 324030մ³ (այդ թվում թափոններ 287930մ³, հին լցակույտեր 36100մ³):

2. Բացահանք N2 - 93077մ³ (այդ թվում թափոններ 85877մ³, հին լցակույտեր 7200մ³):

Մինչև N1 բացահանքի շահագործման 17-րդ տարվա սկիզբը լցակույտային ապարները 121900մ³ ծավալով տեղափոխվում են արտաքին լցակույտ, իսկ 17-րդ տարվանից սկսած մնացած 202130մ³ ծավալով ապարները պահեստավորվում են մշակված տարածությունում:

Մինչև N2 բացահանքի շահագործման 36-րդ տարվա վերջը լցակույտային ապարները 69630մ³ ծավալով պահեստավորվում են արտաքին ընդհանուր լցակույտերում: Այնուհետև 37-րդ տարվանից սկսած մշակված տարածությունում:

Արտաքին լցակույտերը գործող են, այն տեղադրված է N1 և N2 բացահանքերի միջև՝ նրանց հարավային մասում: Արտաքին լցակույտերի մակերեսը կազմում է 5.2հա, փոփոկ ապարների միջին բարձրությունը 4.0մ:

N1 բացահանքի ներքին լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է 7.3հա, փոփոկ ապարների միջին բարձրությունը - 3.0մ:

N2 բացահանքի ներքին լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է 1.4հա փոփոկ ապարների միջին բարձրությունը -1.9մ:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվում է արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև աշխատանքային հրապարակները, լցակույտերը և ավտոճանապարհները, փոշենստեցման նպատակով ջրելու համար:



Խմելու ջուր բերվում է ՄԿ- ВЛБ-1.4 մակնիշի կցիչ ցիստեռնով, իսկ տեխնիկական ջուրը КО – 002 մակնիշի ջրցան ավտոմեքենայով:

Խմելու ջրի ծախսը ընդունված է մեկ մարդու համար՝ 25լ/հերթ, տեխնիկական ջրինը 0,5 լիտր/մ²: Փոշեմատեցումը կատարվում է օրեկան 3 անգամ:

Բացահանքում գետնաջրերը բացակայում են: Հետևաբար, բացահանքի շահագործման ժամանակ նրա տարածքը թափվող մթնոլորտային տեղումների մի մասը հեռանում է ինքնահոս կերպով, իսկ մյուս մասն էլ ներծծվում է բացահանքի հատակի տուֆերի ճաքերի և ծակոտիների միջոցով:

Կենցաղային կեղտաջրերը ջրցուղարանից ինքնահոս կերպով թափվում են 25,0մ³ ջրամերժ պատերով զուգարանի հորը, որտեղից էլ աղբահան մեքենայով պարբերաբար հեռացվում են:

Ընկերությանը իր պատրաստականությունն է հայտնում պարբերաբար հանդիպելու համայնքի ղեկավարության հետ, քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրերը և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե:

Բացահանքը գտնվում է ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաքային համայնքի տարածքում, որի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացմանն իր ներդրումը կունենա նաև ընկերությունը: Ընկերությանն իր պատրաստականությունն է հայտնում պարբերաբար հանդիպելու համայնքի ղեկավարության հետ, քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրերը և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե: Տարեկան նախատեսվում է 350հազ. դրամ գումարի ներդրումներ կատարել: Բացահանքի շահագործման աշխատանքների ավարտից հետո կատարվելու է լեռնային աշխատանքների հետևանքով խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնումը:

Խախտված հողերի լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի էությունը կայանում է բացահանքերի ներքին լցակույտերում և արտաքին ընդհանուր լցակույտերում պահեստավորված ապարների փռումը և հարթեցումը, որոնց ռեկուլտիվացվող տարածքները կազմում են N1 բացահանքի համար-7.3հա, N2 բացահանքի համար-1.4հա, արտաքին լցակույտերի համար - 5.2հա, ընդամենը-13.9հա: Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար նախատեսվող գումարը կազմում է 1063.0հազ. դրամ:

Հանքարդյունահանման աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները: Տարածքում չեն հայտնաբերվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներ:

Նախատեսվող աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրը աղտոտվածությունից զերծ պահելու նպատակով նախատեսվում է կիրառել բնապահպանական հետևյալ միջոցառումները.

Պարբերաբար հսկել մթնոլորտային օդի մաքրությունը հորատման հրապարակներում, ավտոճանապարհների վրա

Փոշեզրկման նպատակով աշխատանքային գոտիներում պարբերաբար կատարել ջրցանում,

Օգտագործվող ագրեգատները աշխատեցնել սարքին վիճակում վնասակար գազերի գերնորմատիվային արտանետումները բացառելու համար:

Մեքենաների աշխատանքի ժամանակ նախատեսվում է վնասակար նյութերի արտանետումների քանակը փոքրացնելու համար սարքավորումների վրա վտանգավոր նյութերի չեզոքացուցիչների տեղադրում: Ինչպես նաև հետևել որպեսզի մեխանիզմի աշխատանքի ժամանակ վառելիքի և քսայուղերի արտահոսք տեղի չունենա:

Ջրային ավազանի կեղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

ԵԶՐԱՅԱՆԳՈՒՄ

Այսպիսով հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:



Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են ՀՀ բնապահպանության նախարարության ստորաբաժանումները:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:

2. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջրերի որակի, քանակի, վիճակի, օդ, հող և այլն) և շահագործման ռեժիմի մոնիթորինգ, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

3. Առաջացած շինադրի (կենցաղային աղբի) հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ԲՆԱԲԱՐ ՏՈՒՖ>> ՄՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Շիրակի մարզի Արթիկի տուֆի հանքավայրի արևելյան տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Ձ. Զուռնայան